ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1

ք. Երևան_ «28» 04 2026թ.

Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, <ՄԱՐԶԱՆԴ>ՍՊԸ-ն,ի դեմս տնօրեն Յուրա Մարգարյան ի, որը գործում է տնօրեն-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Ն 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով, ներառյալ դրանում նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) *ՀՀ ԱԺ առաջին մասնաշենքի նկուղային հարկի և նկուղային հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման* աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում *ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1* ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կատարողի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքները Կատարողն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ *առավելագույնը 50-րդ օրացույցային օրը, Պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:*

2. ԿԱՏԱՐՈՂԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կատարողի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կատարողն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կատարողի կողմից Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կատարողի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կատարողի կողմից խախտվել են Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կատարողին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կատարողին տրամադրել 5 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կատարողի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը Կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում Կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կատարողն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային Աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կատարողն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կատարողն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են Պայմանագրի N – Հավելվածում:[2]

3.4.11 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն Պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված Աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[3]

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ*

[3] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:*

4.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ Աշխատանքները և ժամկետները: Կատարողն պարտավոր է Պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ Աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կատարողի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված Աշխատանքներն ընդունելու համար.

2) Պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված Աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված Աշխատանքների) համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին և, եթե կատարված Աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված Աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը,

իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված Աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 25980000 (քսանհինգ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 4330000 (չորս միլիոն երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների՝ Պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[4]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական Աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված Աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված Աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն Պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[4] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[5] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքի արդյունքը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[5] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սխալմամբ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները համապատասխամ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման Պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ Պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:[6]

8.11 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն Պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված Աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե Պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և Պայմանագրի

---

[6] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և Պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[7]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Աժ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ -
ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար
– գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<ՄԱՐԶԱՆԴ>ՍՊԸ
Արագածոտնի մարզ գ.Գեղաձոր 3փ տուն 2
ՀՎՀՀ 05012047
ՀՀ 220423330079000
<ՄԱՐԶԱՆԴ>ՍՊԸ Նորայր Ռաֆայելի Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[7] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*
Սույն կետի 5-րդ նախադասության մեջ սահմանվող ժամկետը չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից:

Հավելված թիվ 1
«28» 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

N		ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ (ներառյալ անհրաժեշտ նյութերը)	ՉՄ	Քանակը	Միավ. արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
		ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Ե6-189 Ե12-287 46-84	Բետոնի ուղիների պատրաստում 400մմ լայնությամբ, 300մմ խորությամբ «ԲՄ-200», նախապես փորել, քայքայված բետոնի հողի հետ միասին, ձեռքով տեղափոխել 30մ. և բարձել բեռնատար ավտոմեքենայի մեջ	խմ	3,5	6088	21308
2	ц-3 23-77 23-229	Աղբի տեղափոխում 18կմ, 30գմ /0.4x0.3/ 2.1տ	տ	4,2	4610	19362
3	Ե8-505	Միջնորմային պատի շարում պեմզաբլոկից 200մմ հաստությամբ, նյութերի տեղափոխում նկուղային հարկ 30մ	քմ	24	21205	508920
4	Բ6 Ե11-11 նեղվ. պայմ.	Բետոնե հատակի պատրաստում 100մմ հաստությամբ «ԲՄ-200», ստանալ հարթ մակերես /ծանր խիճ և ավազ, ցեմենտ 400 մարկայի/ 160քմ x0.1 բետոնի շրիշակներով h=80մմ	քմ	240	2032	487680
5	1-961-2 Շուկա k=2	Նախկին տեղադրված խողովակների՝ ջեռուցման և խմելու ջրագծերի ապամոնտաժում և մոնտաժում նոր խրամողու մեջ 300մմ խորության վրա, երկու տեղում բետոնից դիտահորերով (ծածկի կափարիչներով)	գմ	260	6387	1660620
6	23-77 23-229 ц-3 նեղվ. պայմ.	Նախկին սվաղված գաջի և ցեմենտ-ավազի քայքայված մակերեսների մաքրում, առաջացած շին. աղբի	տ	8,9	5782	51459,8

		տեղափոխում 30մ, բարձում բեռնատար ավտոմեքենայի մեջ, տեղափոխում 18կմ				
7	Շուկա	Պատի մեջ բացվածք 1.0x2.3մ /h/ ձեռքի թրթռիչ էլեկտրական գործիքով, կրող պատի հաստությունը 700մմ, առաջացած շին. աղբի տեղափոխում, բարձում բեռնատար ավտոմեքենայի մեջ, տեղափոխում 18կմ	լրակազմ	1	52000	52000
8	8	Բացվածքի ուժեղացում մետաղական անկյունակներով /էսքիզ գծագիր L75x63, L50x /1720x12մ+9մx1150	լրակազմ	1	41003	41003
9	Ֆին. նախ հրատ 25թ. Կետ 895	Օդափոխության համակարգի պոլիէթիլենային խողովակի տեղադրում առաստաղի մեջ, դուրս հանելով կրող արտաքին պատից դուրս I-160 ձևավոր մասերով, դրսի կողմից ցանցային շրջանակի տեղադրում	գմ	70	4879	341530
10	34-323 34-349	Կախովի առաստաղի իրականացում հեծաններից 100մմ, գիպսաստվարաթղթից 9.5մմ հաստությամբ, յուր. 4մ քայլով, լայնության կողմում 2հատ սպասարկման համար նախատեսված դռնակներով	քմ	250	12990	3247500
11	34-338 նեղվ. պայմ.	Նույնի երկշերտ ներկում, բարձրորակ լատեքսային ներկով, ծեփամածուկից հետո, գույնը նախապես պատվիրատուի հետ համաձայնեցնելով	քմ	250	5155	1288750
12	14-422 նեղվ. պայմ.	Պատերի երկշերտ ներկում, բարձրորակ լատեքսային ներկով	քմ	420	3274	1375080
13	23-172 Շուկա	Պատուհանագոգերի փոխարինում նոր գրանիտե պատուհանագոգերով (եզրերը մշակված, կլորացված)/նախապես տեղում ճշտել մակերեսը/ 800մմ լայն. 2000մմ երկարություն, 9 հատ	քմ	25	50000	1250000
14	8-53-1	LED լամպի մոնտաժում/տեղադրում 15w 4000k220x220, ձևը և տեսքը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ	հատ	40	13496	539840

15	8-612-10	Լուսատու LED 400w ժապավեն 4000w	լրակազմ	24	27950	670800
16	Ֆին. նախ հրատ 25թ. Կետ 453	Հատակի բարձրորակ կերամոգրանիտի տեղադրում, տեսքը, ձևը և գույնը պատվիրատուի հետ համաձայնեցնելով	քմ	170	15000	2550000
17	8-409-3	Մալուխի մոնտաժում, պղնձե ջղերով 13ВГ 3x1.15	մ	300	740	222000
18	8-409-3	Մալուխի մոնտաժում 2x4մմ ВВГ нг-LS	մ	250	1029	257250
19	8-409-3	Մալուխի մոնտաժում պղնձե ջղերով 3x2.5 հատվածքը ВВГ	մ	300	828	248400
20	Ինֆոր. 25թ.	Բաշխիչ տուփերի տեղադրում IP20	հատ	14	1505	21070
21	8-591-7	Վարդակների Titan կամ Simon, տեղադրում հողանցումով IP+N	լրակազմ	50	3990	199500
22	8-525-2	Էլ. Ավտոմատ անջատիչ Legrand կամ LB, TX-40A 400v 3P, 40 40 60	հատ	4	81470	325880
23	8-47-9	Ճկախողովակի մոնտաժում/տեղադրում	մ	250	577	144250
24	8-612-10	Խմբակային վահանակ 24 մոդուլ	լրակազմ	4	62251	249004
25	8-525-2	Էլ. Ավտոմատ անջատիչ Legrand կամ LB, TX-25A 230v IP, 40 40 30	հատ	4	77050	308200
26	8-525-1	Բաշխիչ սանր IP4049-42	հատ	1	24500	24500
27	8-612-10	Առաստաղի մագնիսական ռելս, ներկառուցվող	հատ	3	26002	78006
28	8-612-10	Առաստաղի մագնիսական ռելս անցում, սև գույնի ճկախողովակով/գոֆրեյով	հատ	2	20730	41460
29	8-589-1	Առաստաղային կետային լույսերի տեղադրում	հատ	48	20571	987408
30	8-612-10	Լուսատու ժապավեն LED լամպով 10w 4000k	լրակազմ	86	35180	3025480
31	8-612-10	Մագնիսական ռելսի լույս LED 12w 4000k БК30սմ	լրակազմ	13	42400	551200
32	14-419	Նախկին ներկված առաստաղներից քայքայված-սևացած ներկի մաքրում, առաջացած աղբի հեռացում	քմ	220	928	204160
33	Շուկա	Առաստաղի քիվ, ձևավոր, գիպսոնիտից 160/200 /հնարավոր չափերի փոփոխություն վերանորոգման ժամանակ/	գմ	130	4600	598000

34	Շուկա	Պատերի քիվ եղածի նույնանման /առաստաղի չափերի հնարավոր փոփոխություն/	գմ	105	4600	483000
35		Նախկին մոնտաժված կոյուղագծի, ջեռուցման և ջրի համակարգի /խողովակների և մարտկոցների/ ապամոնտաժում և նորերով մոնտաժում (բարձրորակ նյութերով)	լրակազմ	1	480000	480000
		ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ				
36	46-84	Քայքայված, միաձույլ ե/բ առաստաղների, միջնորմային պատերի, հատակի բետոնների ապամոնտաժում/քանդում, տեղափոխումը ձեռքով 80մ, բարձում բեռնատար ավտոմեքենայի մեջ, [/2.3x3.8x0.18մ հաստությամբ/ 4+ ծածկը+միջնորմերը /3.8x0.2x4.8 /h// 4+ հատակը /3.8x2.0x0.26 հատ/ 4 միջանցքի կողմից դռների կողքերի և միջնորմային պեմզաբլոկե պատերի ապամոնտաժում/քանդում 15մ³, բետոնից «M-200» /0.5x0.2x3.6/ 8] 4=6.5մ3+15մ3+8մ3+2.9	խմ	7,5	4483	33622,5
37	46-77 նեղվ. պայմ.	Միաձույլ բետոնի և երկաթբետոնի ապամոնտաժում/քանդում, ձեռքով /6.5+8+2.9/, տեղափոխում և բարձում բեռնատար ավտոմեքենայի մեջ	խմ	8,7	20154	175339,8
38	23-77 23-229 310-12 ц-3	Բեռնատար ավտոմեքենայի մեջ բարձված աղբի տեղափոխում 18կմ /15+12.4/ 1.9տ	տ	31	4610	142910
39	Е6-161 նեղվ. պայմ. К21.15	Երկաթբետոնե ծածկի իրականացում, նոր տեղադրված մետաղական հեծանների առկայության դեպքում «БМ-200», թեթև խիճ, ծանր ավազ, ցամենտ «M-400», 150մմ հաստությամբ /3.8մx2.3մx0.15/ 4 /-4.8նիշում/	խմ	3,05	57690	175954,5
40	Ֆին.նախ հրատ. 21թ. Կ339	Մետաղական հեծաններ /4.5մx5 հատ/ 2 N12 երկտակ	մ	22,5	6513	146542,5

41	E8-169 K=13	Միջնորմային պատերի իրականացում պեմզաբլոկից 200մմ հաստությամբ H=4.8մ /3.8x4.8 /h//4 նյութերի տեղափոխում ±0.00 նիշից -4.8մ և հորիզոնական տեղափոխում 50մ	քմ	37,5	3604	135150
42	E15-264 k=13	Միջնապատերի ամրացում ցանցով և սվաղում ցեմենտավազային շաղախով /ծանր ավազ, ցեմենտ «M-400»/ 1x2 հարաբերությամբ նյութերի տեղափոխում ձեռքով 100մ	քմ	73	2955	215715
43	E11-11 k=1.20	Հատակների բետոնի իրականացում «БМ-200» 120մմ հաստությամբ՝ նյութերի տեղափոխում ≈100մ ձեռքով /3.8x2x0.18/4 ստանալով հարթ մակերես մեկուսացման համար	խմ	2,75	45290	124547,5
44	E11-135	Հատակի պատրաստում բարձրորակ հախճասալով 10մմ հաստությամբ /3.8x2/4, մեկուսացումը իզոգամով մ=4մմ, բարձրացնելով պատերի վրա 100մմ	քմ	16	18125	290000
45	E15-92	Շրիշակների պատրաստում հախճասալերով 100մմ բարձրությամբ //3.8x2+2x2/2/ 0.1	քմ	2,75	19642	54015,5
46	E34-359	Կախովի առաստաղի իրականացում ջրակայուն գիպսաստվարաթղթից 10մմ հաստությամբ, /3.6x2/4	քմ	16	3930	62880
47	E15-92	Պատերի երեսապատում բարձրորակ հախճասալերով /12մx1.2 /h//2	քմ	31	16300	505300
48	E15-665	Պատերի ներկում՝ 1.2մ բարձրությունից հետո, բարձրորակ լատեքսային ներկով, 4.8-2.2մ ծածկումից հետո /12x2.20h/ 4	քմ	53	3198	169494
49		էլեկտրականության և լուսավորության մոնտաժում/իրականացում 2 սանհանգույցում /վարդակներ 4հատ, անջատիչներ 4հատ, օդամղիչ վենտիլյատոր 2հատ, էլ. ավտոմատ անջատիչ 2հատ, կախովի LED լամպեր 4հատ, հաղորդալարը 1x2.5մմ²/	քմ	4	40000	160000

50	P16-44	Հախճապակյա որակյալ զուգարանակոնքերի մոնտաժում	հատ	2	39196	78392
51	P16-45	Հախճապակյա որակյալ լվացարանների և ծորակների մոնտաժում/տեղադրում	հատ	2	36914	73828
52		Մոնտաժման համար պահանջվող մետաղապլաստե խողովակներ 15-20մմ, փականներ, կոյուղու խողովակներ I=100մմ, անցումներ, անկյունակներ և այլն՝ յուրաքանչյուր սանհանգույցի համար	կոմպլ.	2	25086	50172
53	Շուկա	Միացում գործող ջրագծերին և կոյուղագծերին /միացման տեղը համաձայնեցնել պատվիրատուի հետ/	կոմպլ.	4	6500	26000
54	E8-194	Փայտամած, աշխատանքների իրականացման համար	քմ	14	1405	19670
		ԸՆԴԱՄԵՆԸ՝				**25194154**
		ՉՆԱԽԱՏԵՍՑԱԾ ԾԱԽՍԵՐ 6 % /3+3/				**1511649**
		ԸՆԴԱՄԵՆԸ՝				**26705803**
		ԱԱՀ 20%				**5341161**
		ԸՆԴԱՄԵՆԸ՝				**32046964**

Վերադիր ծախսերը 13% և շահույթը 11% ներառված են միավոր արժեքների մեջ:

Ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ("Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս): Աշխատանքների ավարտը համաձայնագիրն՝ ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, առավելագույնը 50-րդ, օրացույցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ մասնակիցը համաձայնում է Աշխատանքներն ավարտել ավելի կարճ ժամկետում:

* Կատարողն աշխատանքները կատարում է Մ. Բաղրամյան պող. 19 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ -
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
– գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
ՀՄԱՐԶԱՆԴՍՊԸ

Արագածոտնի մարզ գ.Գեղաձոր 3փ տուն 2

ՀՎՀՀ 05012047

ՀՀ 220423330079000

ՀՄԱՐԶԱՆԴՍՊԸ՝ Արամ Ցի Պապոյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
«28» 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ն ը/կ	Կատարողի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը*	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Ազգային ժողովի առաջին մասնաշենքի նկուղային հարկի և նկուղային հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքներ	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած	առավելագույնը 50-րդ, օրացույցային օրը,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ -
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՀՄԱՐԶԱՆԴ>ՍՊԸ
Արագածոտնի մարզ գ.Գեղաձոր 3փ տուն 2
ՀՎՀՀ 05012047
ՀՀ 220423330079000
ՀՄԱՐԶԱՆԴ>ՍՊԸ՝տնօրեն Յուրիկ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

Հավելված N 3
«28» 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված ծախսերի համարակալումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/501	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ -
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
– գլխավոր քարտուղար
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
L.S.

ԿԱՏԱՐՈՂ
ՀՄԱՐԶԱՆԴՍՊԸ

Արագածոտնի մարզ գ.Գեղաձոր 3փ տուն 2

ՀՎՀՀ 05012047

ՀՀ 22042333007 9000

ՀՄԱՐԶԱՆԴՍՊԸ՝ Ռոբերտ Մկրտչյան

/ստորագրություն/
L.S

Հավելված թիվ 4
«28» 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 28 » 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
«28» 04 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
Կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.